ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«09» «հուլիսի» 2024 թ. № 263-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 8-Ի N 275-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի օգոստոսի 8-ի «Շրջակա միջավայրի նախարարության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» N 275-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Աշխատողի՝ Կառավարական 3-րդ տան 5-րդ հարկ մուտքն ու ելքն իրականացվում է մագնիսական քարտով (այսուհետ՝ Քարտ) 5-րդ հարկում գտնվող պատին ամրացված մուտքի և ելքի հաշվառման սարքերին (այսուհետ՝ Սարք) հպման միջոցով:»:

2) 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«14. Քարտը սարքերին հպելու պահը (աշխատանքի վայր մուտքի և ելքի հստակ ժամանակը) արձանագրվում է էլեկտրոնային համակարգով:

Բոլոր դեպքերում Կառավարական 3-րդ տան 5-րդ հարկից բացակայելու դեպքում Աշխատողը պարտավոր է Քարտի միջոցով գրանցել ելքը և մուտքը:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հուլիսի 10-ից:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

7/9/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

«09» հուլիսի 2024թ.

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

ք. Երևան